


ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱՅԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՍՐԱՅԻՐԻ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղումն նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Մեր ազգային-կրօնական հնաւանդ օ-
րէնքներէն մէկն ալ կը խախտի, նոյն իսկ մեր
ձեռքով ու մեր տկարութեան պատճառաւ,
չըսելու համար ծայրայեղ հաճոյակատարու-
թեան : Տ. Գրիգորիս եպիսկոպոս Ալեքսանդրի
ընտրութիւնն՝ իբրեւ կաթողիկոս Կիլիկիոյ՝ որ
որ 1895ին կատարուած էր օրինաւորութեան
ամեն պայմաններով ու ազգին բաղձանաց հա-
մաձայն, յամի Տեառն 1898 փետրուար 20,
—նախընթաց ուրբաթ օր, յիշատակելի թուա-
կան մը այլեւս— բեկանուել է . . . Ազգ. Պատ-
րիարքարանին կողմէ, Վարչութեան որոշմամբ :

Կը յիշուի թէ այդ ընտրութիւնը ընտ-
րահանգի չէր երեւցած Դրան, որ Կիլիկիոյ երեք
եպիսկոպոսներ զրկելով Սիւս, ընտրական «ձե-
ւացում» մը կատարել տուած էր որու հետե-
ւանքով ինքզինքը կաթողիկոս հռչակեց Գա-
ղանձեան անուն եպիսկոպոսը : Իզմիրլեան
Սրբազանի պատրիարքութեան տագնապալի
օրերուն մէջ էր որ տեղի կունենար այս ե-
կեղեցական ոտնձգութիւն . ամբողջ ազգը
ճնշուած յուզման մը տակաւորութեան տակ
լսեց իրողութիւնը . ոչ ոք կրնար ձայն հա-
նել, բայց ոչ ոք կը համակերպէր Գաղան-
ձեանը կաթողիկոս ճանաչելու : Մատթէոս
Պատրիարք չըլքաբերականով մը իմացուց Թուր-
քիոյ հայերուն թէ այդ երեք եպիսկոպոսնե-
րը դադարած են Հայաստանեայց եկեղեցւոյ
հոգեւոր պաշտօնեայ նկատուելէ :

Այդ թուականէն ի վեր գահավէժ ի-
րարու յաջորդող դէպքերը ծանօթ են . Իզ-
միրլեան Սրբազանի հրաժարումը, տեղապա-
հի անուանումը, օգոստոս 14ի ցոյցը, Պոլսոյ
Նարդը և ի վերջոյ պատրիարքական ընտրու-
թիւնը : Անցեալ տարի, Օրմանեան Պատրիարք
յաջողեցաւ Գաղանձեանը հեռացունել տալ
Սիւսէն . այսքանը չէր բաւեր սակայն Ազգին
ու եկեղեցւոյն օրինաւոր իրաւունքները տեղը
բերելու . նախաքայլ մըն էր միայն, որուն պէտք
էր յաջորդէին աւելի ազգու ձեռնարկներ՝
Ալեքսանդրի Սրբազանի ընտրութիւնը վաւե-
րայնել տալու համար . այդ ձեռնարկներ եթէ
եղան իսկ, ապադիւն մնացին . Կիլիկիոյ կա-
թողիկոսութեան խնդիրը Վարչութեան օրա-
կարգին մէջ էր միշտ ու միշտ առկա : Պատ-
րիարքին և կրօնական ու քաղաքական ժո-

ղովներուն միջեւ սկզբունքի ու կարծիքներու
համաձայնութիւն մը, աւելի ճիշդ պիտի ըլլայ
ըսել՝ միաբանութիւն մը գուցէ բարոյական
ուժ մը կազմէին որ մինչեւ մէկ աստիճան
իր ազդեցութիւնը ունենար Դրան հայեցա-
կէտներուն վրայ . այդ բանը կը պակսէր դժ-
բաղդաբար . մեծամասնութիւնը, քաղաքա-
կան ժողովին ազդեցիկ անդամները ու կրօ-
նականին թափթփուքները —բանի մը հըռ-
հպատակ տէրաւ վարդապետ— կը պահան-
ջէին որ Ալեքսանդրի Սրբազան հրաժարական
տայ, որով խնդիրն ինքնին լուծուի . իսկ կրօ-
նական ժողովին երկու ատենապետները,
Գրիգորիս եպիսկոպոս Յովհաննէսեան և Վահ-
րամ եպիսկոպոս Մանկունի, կը պնդէին ընդ-
հակառակ թէ կատարուած ընտրութիւնը
օրինաւոր է, թէ մենք մեզէն տեղի տալու
պէտք չունինք և թէ սարբեր խնդիր է եթէ
Դուռը բացորոշապէս յայտարարէ թէ չի պի-
տի վաւերացունէ կամ թէ կը բեկանէ Ա-
լեքսանդրի Սրբազանի ընտրութիւնը,—ինչ որ
չըրաւ երեք տարիէ ի վեր :

Այս ներքին վէճերը եկան յանգեցան
խառն ժողովի փետրվար 20ի նիստին որ Օր-
մանեան Պատրիարքի նախագահութեամբ
գումարուած էր յատկապէս Կիլիկիոյ կաթո-
ղիկոսական խնդրին վերջնական ելք մը տա-
լու համար : Քաղաքական անդամները կը
փաստաբանէին ու կառավարէին թէ կա-
տարուած ընտրութիւնը պէտք է բեկանել՝
ձեւական թերութեան պատճառաւ . կրօ-
նականին Գերապատիւները ընդդիմախօսեցին
ազգուաբար . մասնաւորապէս Գրիգորիս ե-
պիսկոպոս Յովհաննէսեան որ 1895ին Պատ-
րիարքարանի կողմէ Սիւս զրկուած էր կաթո-
ղիկոսական ընտրութեան հսկելու և նախա-
գահելու, պաշտպանեց կատարուած գործո-
ղութեան օրինաւորութիւնը, իրեն ձայնակից
ունենալով Մանկունի եպիսկոպոսը :

Իրենց տեսութիւնը, որքան ալ արդար,
անգոր եղաւ սակայն յաղթելու մեծամաս-
նութեան ձայնին . գաղտնի քուէարկութիւն
կատարել առաջարկուեցաւ, և քաղաքական
ժողովը միաձայնութեամբ ու կրօնականը իր
ներկայ վեց անդամներուն չորսին ձայնով,
որոշեցին «չեղեալ նկատել Ալեքսանդրի Սրբ-
ազանի ընտրութիւնն» իբրեւ կաթողիկոս Կի-
լիկիոյ և նոր ընտրութիւն կատարելու հրա-
ման խնդրել Դուռնէն :

Գրիգորիս Յովհաննէսեան ու Վահրամ

Մանկունի եպիսկոպոսները դառնացած ու
ցաւած սրտով քաշուեցան ժողովէն :

Ահա՛ երեք տարիէ ի վեր ազգն զբաղե-
ցունող էական հարցի մը ազգին հոգեւոր ու
աշխարհական գլուխներուն կողմէ տրուած
ելքը, որուն ստուգութեանը չի պիտի ու-
զէինք հաւատալ՝ եթէ նոյն իսկ Պոլսոյ թեր-
թերը չիբերէին մեզ անոր մանրամասնութիւն-
ները :

ԲՈՒՐԳԵՐՈՒՆ

Մտնենքու մեզ փաթուած կարմրակ
Վերջալոյսի երկնին,
Հին դարերու խորհրդաւոր յիշատակ
Բուրգերն ինձի կը նային :

Սկիզբսին մօտ, հանդարտեմ վեհափառ
Կեանքի անլոյծ առեղծուած,
Ջոյգ բուրգերուն ես կը նայիմ անդադար
Վերջալոյսով հրդեհուած :

Մօտն միայն ինձի զարմանք կուտայ ան
Գարեւու յաղթ զանգուած,
Բայց հեռուէն քառք բլուրն անկեցուն
Երազներու փաթուած,

Անմահութեան խորհուրդներով կողողի
Կը լեցնէ խեղճ հոգիս . . .
Կը մթնայ սակայն լոյսը բիւրեղի
Ու կը մթնէ ներսիդիս . . . :

Ինչ խեղդութիւն ապրիլ կեանք դարաւոր
Յաւերժական բուրգերուն,
Երբ իսկուր է տունին նախան մեծաւոր
Ոտններուն անկայուն :

1 մարտ 98

ԼԵՒՈՆ ԱՐԱՄԵԱՆ

ՄԵՔԵՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
... ՄԵՔԵՆԱՅԻ ՄԸ ՇՈՒՐՁԸ

Պարսից ծոցէն մինչեւ Նեղոսի ափերը, թէ՛ն
պիքի և հաշիւի այդ երկու երկիրներուն մէջ, մի-
եւնոյն ստորաբարձ կիրքերը, միեւնոյն աղտոտ և
զձուձ բարքերը :

Գեռ ամիս մը չկա՞ տխուր, ցաւալի արձա-
կանք մը մեզ կը հասնէր Թէհրանէն : Տեղւոյն՝ զիր-
քով մենք բայց հոգեով պզտիկ աղաները իրենց դրա-
մի ոյժին կռթնած, խլած էին խմբագրի մը ձեռքէն
տաղադրական մատուցը, արգիլելու համար Շաւիղ
թերթին հրատարակութիւնը որ անշուշտ չէր կըր-
ցած լուել, ամեն անգամ որ անիրաւութիւն մը,
զրկանք մը կամ զեղծում մը տեսած էր գործուած ի
վնաս հանրութեան, այսինքն հայ ազգին :

Բայց անդին խաւարաւոր, կէս-վայրենի բայց
հարուստ—Աստուած գիտէ ինչպէս— աղաներ կային
որ չէին կրնար մարսել որ կալուածատէր, թաղական
կամ գրամատէր չեղող մէկը իրենց գործերուն խառ-

նուի և ցուցունէ չխոսկ ճամբան որ ապահովաւ պէս իրենց հետեւածը չէր :

Եւ այդ անդրձրհեղեղեան գլուխները բանի մը ոսկի աչքէ հանելով կը կեղեքէին Շաւիղի խմբաւորը :

Ասոնք՝ առանց բիւրտ ըլլալու հարստահարիչներ են և առանց գաւազանի . . . սովիանքներ :

Աւագ, որուն մտքէն կրնար անցնիլ թէ այդքան հազարաւոր մղոններով իրարմէ հեռու, օրէնքներով, բարբերով, սովորութիւններով տարբեր երկիրներու մէջ բարբերը, և գործելու, դատելու ու մտածելու եղանակը միեւնոյնը եղած ըլլան՝ մասնաւոր թշնամի, խաւարամիտ և իրենց խղճմտանքէն վախացող անձնաւորութիւններու քով :

Ձէ՛, մարդուս վրայ ստակու՛մ կուգայ երբ կը մտածէ թէ տասնեւիններորդ դարուն այս հոգեվարքի վայրկեաններուն մէջ, միջնադարեան միջոցներ ձեռք կառնուին խեղդելու համար տկարին իրաւունքը, մարելու համար լոյսին ճառագայթները և արգիլելու համար որ ճշմարտութիւնը փայլի :

Քարերագրաբար ամիրաներու, պատր ծակող, ցեղու, չորստններու ժամանակը անցած է, և մարդ կրնայ արդար դատ մը պաշտպանել մինչեւ իսկ առանց . . . տպագրական մամուլի մը :

Հիմայ թողունք որ եղելութիւնները խօսին :

Անցեալ տարի ապրիլին երբ ձեռնարկեցինք Փարոսի հրատարակութեան, նիւթական և բարոյական ամեն զոհողութիւն աչք տեսնելով, առանց որ և է աղայի մը օգնութեան դիմելու, այլ միմիայն ապաստանած մեր տկար կարողութեան, բարեկամ աշխատակիցներու աջակցութեան և մանաւանդ հոն, բոլորեան համակրանքին վրայ, քաղաքական ժողովոյ կը դիմէինք խնդրելու համար որ եկեղեցւոյ՝ հետեւ, ևսարար ազգին սեպականութիւնը եղող մէկ տպագրական փոքր ժամուր մեր տրամադրութեան տակ դրուէր, գոնէ այդքանով դիւրացնելու համար ձեռնարկ մը որ ինքնին նոր, պէտք ունէր քաջաւերու թեան :

Քաղաքական ժողովը ընդունեց մեր առաջարկը և մամուլը ստացանք տարուան մը համար, երաշխաւորութեամբ խառն դատարանաց անդամ լելու սուֆ Ազիզ պէյի, պայմանաւ որ ազգային այդ ձեռն, տուութեան փոխարէն ձրի տպագրենք առաջնորդարանի դիւանին գրասենեկի պիտոյքները, պայման զոր կէտ առ կէտ գործադրած ենք :

Բայց այդ պայմանագրութեամբ չէինք կրնար երեւակայել որ այդ ժողովի անդամները մենէ չողորթութիւն, կամ գոնէ լուծիւն սպասելու իրաւունք ունենալ պիտի կարծէին :

Մեր կողմէն այդ չէր : Ժողովը զաւակ, մենք ժողովրդեան օւկանը կրնայինք ըլլալ ուստի դատաւիտեցինք, բնադատեցինք և ի հարկին ծաղրեցինք ինչ որ ուղիղ, արդար, օրինաւոր չէինք կարծեր :

Եզիպտական կառավարութեան մամուլի օրէնքները, ազգին կամը, մեր խղճի ձայնը, այդ ճամբայէն ընթանալ կարտօնէին մեզի և մեր գրեթէ մէկ տարուան շրջանին մէջ մեր ուղղութիւնը այդ եղաւ և այդ պիտի ըլլայ շարունակ :

Մենք անոնցմէ չենք որ թաղական խորհուրդ մը կամ քաղաքական ժողով մը անսխալ, անմատչելի և սուրբասուրբ բան մը կը նկատեն :

Այսօր լրագրութիւնը՝ պետական դահլիճներէն անցնելով մինչեւ արքայական սրահները կը մտնէ, կը խուզարկէ խորհրդարանները, կը բնիէ նախարարական գրասենեակները, դիւանագէտներու սեղաններուն շուրջը կը դառնայ, պետական անձնաւորութիւններու գաղափարներուն կը թափանցէ, ամեն դուռ կը բացուի իր առջեւ, ամեն ականջ կը լսէ զինքը և ամեն տեղ մուտք ունի այն : Այս պայմաններու տակ պատճառ մը չունէինք Պէն-էլ-Սուրէի սեւ գլեհակէն ներս չի նայելու և չի տեսնելու թէ ինչ կը դառնայ հոն . . . ուղորակելու մամուլ մը մեզ փոխ տուած ըլլանին բաւական չէր մեր այդ նուիրական իրաւունքը մեր ձեռքէն խլելու : Մամուլ մը մանաւանդ որ որքան իրենց նոյնքան ալ նպարավաճառ Մարիութին, կոչկալար Կիրակոսին կամ բանաւոր Մարտիրոսին ալ է, որովհետեւ քաղաքական ժողովին ըլլալէ առաջ, անկէց ալ ետքը նորէն, ազգինն է, այսինքն ամեն հայու, և որքան որ հանրութեան օգտին կը ծառայէ՝ որեւիցէ իշխանութիւն մը չենք տեսներ որ զայն գրաւելու իրաւունքը ունենայ :

Բայց կերեւայ որ մեր քաղաքական ժողովի անդամները տարբեր կերպով կը մտածեն, ապա թէ ոչ պայմանագրութիւննիս նորոգելու մեր գրաւոր խըն

դրանքին փոխարէն չպիտի տային այն պատասխանը որ ահագին կերպով զարմացուց զմեզ :

Փետրվար 22 թուականով մեր նամակին պատասխանը դեռ մինչեւ այս երկուշաբթի օր առած չըլլալով և տեսնելով որ քաղաքական ժողովին այս լուծիւնը կրնար փաստել մեր գործերուն, դիմեցինք այդ օրը Առաջնորդական Տեղապահ Հօր խնդրելու համար որ մեր դիմումին ելքը մեզ խնայէ իրրեւ նախագահ այդ ժողովին :

Ապշեցանք լուրորովին երբ Յակոբ Աշոտ վարդապետ մեզ հաղորդեց այն պատասխանը որ զրաւոր կերպով մեզ հաղորդելու բաժնութիւնը չէին ունեցած պատուարժան ժողովին պատուարժան անդամները :

Տիար Նազարէթ Աղապարմ, Առաջնորդարանի դիւանապետը արձանագրութեանց առձեռն տեսլակի մը մէջէն հետեւեալը կարգաց մեզի .

«Յարութիւն Արքիարի խնդրը մերժուեցաւ, և ժողովս՝ Դրիգոր Էֆ. Եղեայեանի առաջարկութեամբ՝ որոշեց մամուլը ծախել աւուրդով :»

Այս անակնկալ և arbitraire որոշումին առջև վայրկեան մը ինքզինքնիս . . . թէհրան կարծեցինք :

Այսօր այսքան :

Ա Յ Ժ Մ Է Ո Ւ Թ Ի Ի Ն

Վարդանանց soler . . . կոխով solուած ու ծածկումով ընդհատուած : Ա՛ս աչ պիտի յետնի :

Պուկարիոյ հայերէն քերթեր իրենց վերջին թիւերուն մէջ նողկանքով ու գայրոյթով կը պատմեն Ֆիլիպիի ազգ. վարժարանին մէջ պատահած ցաւալի ու անօրինակ դէպք մը որ այդ նուիրական հանդէսը փոխակերպել է յաց ու կոծի, ահ ու սարսափի տեսարանի մը : Երիտասարդին մէկը իր ասենաքանոթեանը մէջ սկսնալու թիւն մը կրնէ ներկաներէ մէկ մասին պատկանած կուսակցութեան, որոնցմէ ոմանք ընդմիջելով կը պատահականէն իստի հակառակութիւն մը կայ եղեր արդէն մեջերսին ու միտքերը գրգռուած էին. եւ անա խոռոչութիւն մըն է կը սկսի. «յեսադիւնական» «յաւադիւնական» ու դեռ յետ գիտէր ինչպիսի իրար կանցնին. մարդ մը, — վարձկան մը, կրնէ, — պատահականներու ապակիները կը կոտրէ ու հրագէն կարճակէ օդին մէջ, մինչ մենք աղայ մը — չե՛ք զարմանաւ անշուշտ որ Ֆիլիպիի մէջ աչ մենք աղայ գտնուի — առիշը քերտնը՝ ուսիկան կը հրաւիրէր : Հանդեսին ներկայ կիները ու տղաները մանաւանդ անկարագրելի յոգման ու սարսափի կը մասնակի :

Այսպէ՛ս պէտք էր գնահատելիք ազատ երկիրներու մէջ մեզ՝ հայերու ընծայուած հիւրընկալութիւնը. ուրեմն միշտ ձեռնով մը մը, օտարի մը հսկողութիւնը անհրաժեշտ է մեր վրայ որ յարգող ըլլանք կարգապահութեան, բարեկրթութեան : Բաւական չէին անցած տարի Վառնայի մէջ Օր. Փրագերի դէմ եղածները, — այն անգլիացի մարդասէր աղջկան որ հագարաւոր գաղթականներ կերակրեց, խնամեց, պատարարեց, — ու հիմակ աչ, Ֆիլիպիի մէջ, աչ մը հայեր՝ ազգ. վարժարանին տանը ժողովուած՝ չեն կրնար միաբանիլ քանի մը ձառ խօսելու եւ քանի մը երգ երգելու Վարդանանց յիշատակին :

Ի՞նչ մտածեցին արդեօք քաղաքին պուկարները, այս ամենը իմանալով. մինչ միւս կողմէ կառավարութիւնը քննութիւն կը քանար ինքզինքն արձակողները ու առիշը գործադրողները գտնելու եւ պատժելու համար :

Օ Ր Ո Ւ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Վիեննայէն մարտ 12 թուական հեռագիր մը կը կրէ թէ Թուրքիոյ և Պուկարիոյ միջեւ հակառակութիւնը սաստկանալու վրայ է :

— Սեւանիկէն կը հաղորդեն եւրոպական թերթերուն . «Իստիկական և Դոստլայի նահանգին զանազան կողմերէն լուր կը հասնի թէ Պուկարիոյ մակեդոնացիներէն զինեալ խումբեր նախորդ շաբթուն Թոսոօքի լեռնաշղթային ճամբով Մակեդոնիա մտեր են՝ քրիստոնէից շարդին վրէժը լուծելու համար թուրքերէն և ժողովուրդը ստրի հանելու : Այս լուր ստուգութեան կը կարօտի սակայն, վասնզի, թուրքերը շաբաթներէ հետեւ աւելցուցած են սահմանագիծի պահպան զօրաց թիւը և ձմեռը մեղմացած չէ տակաւին որ այդ տեսակ յարձակում մը դիւրանայ :

«Միւս կողմէ, Դուռը չընթերցական մը ուղղելով դեպքաններուն ծանուցեր է թէ Գոսովայի մէջ չորս պուկարներու կողմէ սպաննութեան փորձ մը եղեր է մակեդոնացիի մը վրայ որ տեղական իշխանութեանց իմաց տուած էր Դաշանայի զէնքի մթերանոցին տեղը : Մակեդոնացին ծանրապէս վիրաւորուած է . յանցաւորները, երեք հոգի, բռնուած են » :

— Կ. Պուսոյ պուկար Էքզարքարանին դիւանադպիր Պ. Տիմիթի Մաքէտոնոքի անցեալ շաբաթ օր զոհ գնաց ոճրագործութեան մը : Պուկար գեղացիի տարազով մարդ մը անոր տունը երթալով, ի Բերա, տեսակցութեան միջոցին գօտիէն ընկելով մը հաներ ու երկու անգամ կրակ ըրեր է Մաքէտոնոքի վրայ : Մարդասպանը յաջողեց է փախչիլ . իսկ վիրաւորեալը մեռեր է յաջորդ առաւօտուն : Յուրակաւորութիւնը կատարուել է հանդիսաւոր կերպով, ի ներկայութեան էկզարքարանի պաշտօնէութեան, պուկար գործակատար Պ. Մարքոֆի և պուկար երեւելիներու :

Պ. Մաքէտոնոքի՝ իր քարտուղարի պաշտօնէն զատ՝ կը վարէր նաեւ էկզարքարանի օւկան պուկարներէն Նովինի լրագրին խմբագրապետութիւնը : Ոճրագործութեան շարժառիթը քաղաքական վրիժառութիւն մը կենթադրուի : Մարդասպանը կը փնտռուի ուստիկանութեան կողմէ որ ստուգած է թէ երկու ուրիշ մարդեր, որոնք փողոցը կը սպասէին իրենց ընկերոջ, անոր հետ մէկտեղ Խասգեղի կողմը փախած էին :

— Ամսոյս սկիզբը, Մարմարաի ծովեզերեայ էրտէք գիւղաքաղաքին մէջ կռիւ մը տեղի ունեցեր է թուրքերու և յոյներու միջեւ : Առաջինները, որոնք նախապարձակ էին, կողպտեր են եկեղեցին ու գերեզմանատան խաչերը խորտակել են : Տեղւոյն յոյն չօրպաճիին միջամտութեան շնորհիւ, որ հրամայել է իր բոլոր ազգակիցներուն՝ տուններն փակուիլ, կռիւը աւելի ծանր հետեւանք չէ ունեցեր ու կարելի եղեր է հանդարտութիւնը վերահաստատել :

— Հռոմի Թրիպոլիս լրագրին Կ. Պուսոյ թղթակիցը կիմանայ թէ Իսմայիլ Բէմալ պէյ որ Ֆիլիպիի մէջ Մեծմայի Էմփեար անուն թուրքերէն թերթ մը կը հրատարակէր, երկտեղի քաղաքականութեան և Ռուսիոյ հակառակ ուղղութեամբ, պաշտօնին հետ համա-

ձայնութիւնն գոյացնելով զաղբերցուցեր է իր հրատարակութիւնը : Իսմայիլ պէյին պալատական պաշտօն մը տրուեր է , միանգամայն կապարի հանքի մը շահագործման մենաշնորհը Քէօթահիոյ գաւառին մէջ :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ստուգութիւն չի գտաւ այն լուր, — զոր արտատպած էինք Արմէնիսէն, — թէ Չարը Բէդրսպուրկ հրաւիրած ըլլայ ամենայն Հայոց Հայրապետը , ունինդրութեան մը համար :

Վեհափառ Կաթողիկոսը փետրվար 26ին պիտի մեկնէր Բագուէն դէպի Գանձակ, քանի մը օր ալ հոն անցունելէ ետք ուղղակի չ'ըմբիւրս վերադառնալու :

Վերջապէ՛ս . . . :

Հաճութեամբ կիմանանք թէ Որբախնամ Թանձնաժողովին անդամները այս իրիկուն ի նիստ պիտի դուստրուին Ընթերցասիրաց ընկերութեան սրահին մէջ նախագահութեամբ Առաջն. Տեղապահ Հօր՝ վերջնական կարգադրութիւն մը ընելու միջոցներուն վրայ խորհրդակցելու համար :

Կիլիկիոյ կաթողիկոսական խնդրոյն ըստացած նոր երեւոյթին վրայ տեղեկութիւն հաղորդած ենք մեր այս աւուր խմբագրականով : Այն նիստին մէջ, ուր Ազգ. Կեդրոնական վարչութիւնը բեկաներ է Ալէքսանտր Երզնկեանի ընտրութիւնը, որոշեր է միանգամայն նոր ընտրութեան պատուիրակ ու հակող նշանակել Երուսաղէմի լուսարարապետ Տ. Սահակ եպիսկոպոս Խաչապետին որ Պատրիարքարանի կողմէ պիտի հրաւիրուի Սիւ երթալ այդ պաշտօնով :

Ընթերցասիրաց ընկերութիւնը իր տարեկան մեծ երեկոյթը պիտի տայ այս տարի ամսոյս 25ին Օրէրայի թատրոնին մէջ որ Բաճր. Խտիվին բարեհաճ հրամանաւ՝ ընկերութեան տրամադրութեան տակ գրուած է :

Թատերական և երաժշտական այդ երեկոյթին համար ընկերութեան Գործադիր Ժողովը ամեն զոհողութիւն յանձն առած է և պատճառներ ունինք կարծելու թէ այս անգամ ուրիշ տարիներէ աւելի փայլուն և աւելի յաջող պիտի ըլլայ այդ բարեգործական հանգէսը :

Անշուշտ հայ հասարակութիւնը գնահատելով այդ ընկերութեան ընծայած օգուտները, պիտի փութայ փոխադարձաբար լաւ ընդունելութիւն մը ընել Գործադիր Ժողովոյ հրաւերին :

Յառաջիկայ թուով պիտի հրատարակենք յայտագիրը այդ հանգէսին որ մեզ համար saisonին լաւագոյնը ըլլալ կը խոստանայ :

ՀՐԱՒԵՐ ԱՌ ԱԶԳԱՅԻՆՍ

Արաբկիրի Առաջնորդական Տեղապահ Հօրմէն առ Եգիպտոսէնակ Արաբկիրցի աղագայինս ուղղեալ մէկ նամակը կարգացուելու համար, պատիւ ունիմ հրաւիրել զիրենք և բոլոր աղագայինս քաղաքիս, յառաջիկայ կիրակի, 20 մարտ, կէս օրէ վերջ ժամը 3ին գումարուիլ ի Գալստեան վարժարան :

Աղօթարար

Գահիրէ, 16 մարտ Եզնիկ Բահանայ Պալուճի

Գալստեան երկսեռ վարժարանի Հոգաբարձութեան կողմէ կը խնդրուի մեզմէ ծանուցանել թէ, Զատիկի տօնին առթիւ աղբատիկ ուսանողաց հազուադէպ համար, աղջկանց ձեռագործները, փոխանակ վիճակահանութեան դրուելու, գլխաւոր և առատաձեռն անձանց նուէր պիտի գրկուին դրամական հատուցման մը փոխարէն :

Սոյն կարգադրութիւնը եղած է, Ազգ. Գալստեան Ընդհանուր Ժողովոյ Ատենապետ Տիգրան փաշայի արտօնութեամբ, ժամանակի խնայողութեան և դիւրութեան համար :

Այս առթիւ, Հոգաբարձութիւնը պարբեր կը համարի հրապարակաւ իր գոհութիւնը յայտնել վարժարանի դաստիարակութեան և ուսուցչութեան Օր. Ս. Մանիսալեանի, որուն ճարտար և հոգածու խնամոց տղանքն է ձեռագործի և ձեռագիրութեան մէջ աշակերտութեան յառաջդիմութիւնը, որուն արգասիքները մեծապէս գնահատուած են ամեն անոնցմէ որ առթիւ ունեցած են զանոնք տեսնելու :

Հոգաբարձութիւնը յոյս կը յայտնէ թէ, յառաջիկային մէջ ալ, յիշեալ օրիորդը, իրեն աջակից ունենալով վարժարանի մէջ պաշտօնավարող միւս երկու ուսուցչուհիներ՝ Օր. Մ. Թաշճեան և Օր. Ռ. Ճիւլմեան, հետզհետէ աւելի գեղեցիկ արդիւնքներ պիտի կարենայ յառաջ բերել :

Աղբատիկոյ ժէզուիթներու վարժարանին երբեմնի պարգեւաբաշխութեանց հերոսը, Պ. Զարեհ Եփրեմեան, որդի Տիար Աստուր Եփրեմեանի, տնօրէն Աղբատիկոյ հեռագրատան, նոյն իսկ ժընէվի մէջ կը տանի յաղթանակ մը որ անգամ մը ևս կը հաստատէ երկտասարդ ուսանողին աշխատասիրութիւնն ու ընդունակութիւնը :

Որքան որ Պ. Զ. Եփրեմեան այժմ կը հետեւի ժընէվի բժշկական համալսարանի ընթացքին, բայց իր պարտալի ժամերը կանցընէ յաճախելով տեղւոյն Գոնսէրվաթուաը, մշակելու համար իր basse-chantantի ձայնը որով, արդէն չի մեկնած, այնքան մեծ յաջողութիւն գտած էր թէ ժէզուիթներու վարժարանի մրցանակաբաշխութեանց և թէ ընտանեկան հաւաքումներու մէջ :

Լա Թրիպլին քը Ժընէվ լրագրի փետր. 25ի թիւին մէջ հաճոյքով կը կարգանք հայ երկտասարդին անունը Գոնսէրվաթուաթի մէջ տրուած դասական նուագահանդէսի մը առթիւ գրուած յոդուածի մը մէջ :

«Բայց երեկոյթին ամենէն գրաւիչ մասը կը կազմէր այն երգը զոր երգէց Պ. Զ. Եփրեմեան, աշակերտ Պ. Տաթիլի : Երեք հազար ունկնդիրներ բռն ծափահարութեամբ ողջունեցին Իֆիթէնի առ Օլիս դասական կտորը զոր իր փառաւոր ձայնով երգէց Պ. Եփրեմեան» :

Մեր խնդակցութիւնները երկտասարդ ուսանողին և իր ծնողաց :

Տ Ե Ղ Ա. Կ Ա Ն

Սէրտար Քիչնէր փաշայի կողմէ եկած վերջին հեռագիրներու նայելով, անկլօ-եգիպտական բանակը յառաջանալու վրայ է Սուտանի մէջ գէպի Տարմուլի որ արդի բանակատեղիէն 3 ժամ հեռու է :

Անցեալ շաբաթ թիշնամիին հետ ճակատամարտի մը մէջ անգլիացի տասնապետ մը և արաբ զինուոր մը սպաննուել են :

Սուտանի երկաթուղիին գիծը երկարած է 203 մղոն եւս և հասած է Ռախթէնապ :

Դուռը երկրորդ անգամ ըլլալով եգիպտական կառավարութեան բողոքած է խտիվի ընկերութեան շոգենաւներու վաճառման դէմ : Բայց այս անգամ ալ պատասխանուել է թէ ասիկայ պարզ առեւտրական շոգենաւներու խնդիր մըն է որ ուէ կապ չունի տրուած ֆերմաններուն հետ :

Ասիուլի բանտին մէջ ալ թիֆօ ծագեր է : Գահիրէի բանտին մէջ այդ հիւան-

դութենէն բռնուողներուն թիւն է 45, իսկ Գաֆր-Չայաթի և Թանթայի մէջ նուազելու վրայ է :

Դատական խորհրդական Սըր Ճօն Աքօթ Բարձր. Խտիվին ներկայացուց տեղական դատարաններու վրայ իր տարեկան տեղեկագիրը :

Բժշկական վարժարանի վերակազմութեան խնդիրը քննութեան պիտի ենթարկուի նախարարաց խորհրդոյ յառաջիկայ նիստին մէջ :

Կ. Պոլսէն ուսական և եգիպտական շոգենաւներով Աղբատիկոյի հասած իսլամ ուխտաւորներուն թիւը 1700ի կը հասնի, որոնց մեծագոյն մասը արդէն Սուէզի ճամբով ուղեւորած են գէպի Հիճազ :

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀՅՈՒՄՈՐԻՍՏԵՐ

ԼՈՆՏՈՆ 15 մարտ. — Բիթկենքը կասաբեալ հանգիստ պատկերեցին Լոնս Սոլպայիլի : Պ. Պալմուր փոխանորդաբար կը վարէ նախարարապետութեան գործերը :

ԲԱՐԻՉ, 15 մարտ. — Ամերիկեան ու սպանիական լրագիրները կը շարունակեն պատերազմաւոր լեզու մը գործածել իրարու դէմ, Մէյի գրահաւորին պայքրման հետեւանով :

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

1898 փետրուար 23 թուականու Գահիրէի խառն դատարաններու արձանագրութեանց գլխունին կողմէ օրինալէս վաւերացեալ պայմանագրութեամբ (sub. N° 1244-1248) :

Ա. Տիար Յակոբ Կիւսիւկեան, վաճառական, հաստատեալ յ'Աղբատիկոյի :

Բ. Տիար Տիգրան Չալֆէրէն, վաճառական, հաստատեալ ի Գահիրէ :

Գ. Տիար Արմենակ Պէյլէրեան, վաճառական, հաստատեալ ի Գահիրէ :

Դ. Շահակից ընկեր մը (commanditaire) : Վերոյիշեալները հաւաքաբար կազմած են ընկերութիւն մը որ պիտի զբաղի ամեն տեսակ ծխախոտի և սիկարէթներու մեծարանակ ու փոքրագուծ առեւտրով և շահագործմամբ :

Այս ընկերութիւն հիմնուած է պարզ յանձնարարիկ եղանակաւ (société en commandite simple) : Բայց Տեղապ. Յ. Կիւսիւկեան, Տ. Չալֆէրէն և Ա. Պէյլէրեանի համար ընկերութիւնը հաւաքական սեռական տակ կը մնայ (en nom collectif) : Ընկերութիւնը չորս տարի շարունակ պիտի տեւէ, սկսեալ 1898 փետրուար 1է մինչեւ 1902 մարտ 1 :

Ընկերութեան կեդրոնատեղին է Գահիրէ նախկին Զապիթի փողոց, վաճառատեղի Ա. Սանոսեան եւ ընկ. որուն կը յաջորդէ ընկերութիւնն :

Ընկերութեան անունն է :

Ա. ՍԱՆՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Յաջորդք

ԶԱՄԲԵՐԹԵՆ, ՊԵՅԼԵՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Միեւնոյն անունը ընկերութեան ստորագրութիւնն ալ է զոր պիտի գործածեն Գահիրէի կեդրոնատեղին գտնուող համարալի ընկերները :

Վաճառականութեան

Գահիրէ, 8 մարտ. 1898	Յակոբ Կիւսիւկեան
	Ա. Ե. Պէյլէրեան
	Տ. Չալֆէրէն

ՀՈՍԿԵ ՀՈՆԿԵ

ԹՂԹԱՍԱՂԻ ԱՇԽԱՐՀԵՆ

Կուղէ՞ք գիտնալ թէ տարին ինչ կը ծախսէ Մօնթէ-Գարլոյի քաղինոն, իր ռուլէթի և քրանթի է փառանքի սեղանները բանեցնելու համար :

Աւասիկ .

Մօնաքոյի իշխանին 1,250,000, խաղա-

րանի տնօրէնին, քննիչներուն և պաշտօնէից 17,250,000, գրասենեակի ծախք 550,000, գործակալութեանց 225,000, ստակներ կորսնցնող խաղացողներուն հատուցում 300,000 և լրագիրներուն 625,000 ֆրանք :

Ինչպէս կը տեսնուի, ահագին ծախքեր ունի խաղի այդ կեդրոնը, բայց ասոր փոխարէն 39,000,000 ֆրանքի հասոյթ մը ունի միւս կողմէ, 39 միլիոն ֆրանք զոր տարուէ տարի իրեն կը բերեն աշխարհիս չորս կողմի կենցաղատէրները, բաղդախնդիրները և ընդհանրապէս ամեն անոնք որ անակնկալ հարստութիւններու տէր եղած են :

Եթէ գովելի բան մը ունի այդ խաղաւորներ, այն ալ սա է թէ ամեն տարի յունվար 1ին իր հաշիւները կը ներկայացնէ վարչութեան :

Եւ ըսել թէ թաղականներ կան որ Մօնթէ-Քարլոյի ֆուրիներուն չափ իրենց ըրածին քաջութիւնը չունին :

ՈՐՔԱՆ ԹՈՒՂԹ ԿՍՊԱՌԻ

Լաւորեալ աշխարհին մէջ 3985 թըղթի գործարաններ կան որ տարին 1,450 միլիոն քիլոկրամ թուղթ կը պատրաստեն : Տպարանները այդ քանակութեան կէսը կսպառեն : մինակ լրագիրներու համար 445 միլիոն քիլոկրամ կը գործածուի :

Նրկրագունդի բնակիչները հետեւեալ կերպով թուղթ կսպառեն, մարդ գլուխ .

Առաջին տեղը կը բռնէ անգլիացին որ տարին 6 ու կէս քիլո կը գործածէ, ամերիկացին 5,70, գերմանացին 4,40, ֆրանսացին 4,20, իտալացին և աւստրիացին 2 քիլո, մէքսիքացին 1,20, սպանիացին 0,85 և ռուսը հազիւ 0,75 քիլո :

ԲԺՒԵԿՆԵՐԸ

Ձինաստանի մէջ ուր տարօրինակ բարքեր կը տիրեն, բժիշկները սովորութիւն մը ունին այն է իրենց գրան վրայ կախել այնքան թըւով լապտերներ որքան իրենց յաճախորդներէն մեռածներ կան :

Թինկ-Շանկ-Չու, երկնային կայսրութեան նախարարներէն մէկը, անցեալները անհանգիստ զգալով ինքզինքը, իր սպասաւորը կը զրկէ բժիշկ մը կանչելու, յանձնարարելով դիմել անոր՝ որ ամենէն քիչ լապտեր կախած է գրան վրայ :

Քիչ մը վերջը ծառան ետ կը գառնայ բժիշկի մը ընկերակցութեամբ :

—Ահա՛, տէր իմ, կըսէ, բժիշկ մը որ միայն մէկ լապտեր կախած էր :

Հիւանդը ինքզինքը ցուցունքէ և դեղագիրը առնելէ վերջը .

—Ներեցէք, Տօթթօր, ո՞րքան ատեն է ի վեր քաղաքիս մէջ հաստատուած էք, կը հարցնէ :

—Նրէկուրնէ ի վեր :

Ա Ձ Դ

Սամուէլ Գուլեան անուն երիտասարդը որ վերջերս Լոնտոնէ վերադարձած է, պատրաստ է անգղիերէն դասեր տալ թէ տեսական և թէ գործնական ֆալսետով դիմեն Բարեգործական ընկերութեան սրճարանը, 1—4

ՍԱՓՐԻՉ

ՕՉԱՆՆԵՍ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գահրէ հաստատուած է և մեծապէս գոհ թուցած իր յաճախորդները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա էլ Խատրա, թրամուէյի կայարանին դէմ) ամեն դիւրութիւն ու հանգստաւտութիւն կընծայէ մաքրութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ ածիլման և թէ վարսայարդարութեան մասին :

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիներով :

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐԻ 7—10

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻԼԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՍԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով : Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրութեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ : Թարմ հանգալիս ջուրեր, անուշահոտ քիւրմէ և ցիտրուսական և մանրադիտական քննութիւն : Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծառայողներ :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար : 33—50

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց չափիկներ, շրջագետներ, և ըն. մաքրութիւն, ճշգրտահանութիւն, և խիստ չափաւոր գին : 4—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԷՆ ԱՂԵՔՍԱՆԳԻՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —	առտ.	12 35	1 44
Պէնհա	ժամ.	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35	—	1 54	3 51
Թանթա	մեկ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44	—	—	—
Տամանհուր	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	—	—	—	—
Աղէքսանդրիա	ժամ.	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	—	—	—	—
Աղէքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	—	—	—	—

ԱՂԵՔՍԱՆԳԻՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷԷ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Օմնիպ.		Էքսորէս		Խառն		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.
Աղէքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —	առտ.	12 35	1 44
Տամանհուր	ժամ.	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9	—	—	—
Թանթա	մեկ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56	—	—	—
Պէնհա	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	—	—	—	—
Գահիրէ	ժամ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	—	—	—	—
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	—	—	—	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ		ԵՐԵԿՈՅ		ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ		ԵՐԵԿՈՅ	
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	7 48	7 53	Սիւէզ (քարափ)	մեկ.	9 50	—	—	—
Պէնհա	ժամ.	12 28	7 48	7 53	—	Սիւէզ (կայարան)	ժամ.	—	3 30	—	—
Զակազիկ	մեկ.	1 34	8 54	9 4	—	Իսմաիլիա	ժամ.	1 20	7 5	—	—
Իսմաիլիա	մեկ.	1 44	9 4	1 —	—	Զակազիկ	մեկ.	3 7	8 53	—	—
Սիւէզ կայարան	ժամ.	3 40	5 —	—	—	Պէնհա	ժամ.	4 13	9 47	—	—
Տօթ (քարափ)	ժամ.	6 55	—	—	—	Գահիրէ	ժամ.	4 17	9 4	—	—
								5 5	10 25	—	—